Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
հունիսի 23-ի նիստի N 27
արձանագրային որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ (մասնակիցներ)
1.	2.	3.	4.	5.
1.	Հիշատակի օրվան նվիրված համալիր ուսումնավարժության անցկացում	Դեկտեմբերի 7	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), կազմակերպություններ (համաձայնությամբ), ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ), բնակչություն
2.	«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի բնակչության և տարածքային պաշտպանության կազմակերպումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացում	Սեպտեմբեր	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ)

1.	2.	3.	4.	5.
3.	Հիմնական միջոցառումների պլանի հաստատում՝			
	1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող հիմնական միջոցառումների 2018 թվականի պլանի հաստատում	Մինչև դեկտեմբերի 20-ը հաջորդ տարվա համար	ՀՀ պետական կառավարման համապատասխան հանրապետական մարմիններ	ՀՀ պետական կառավարման հանրապետական մարմիններ
	2) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման հիմնական միջոցառումների 2018 թվականի պլանի հաստատում	Մինչև դեկտեմբերի 20-ը հաջորդ տարվա համար	ՀՀ պետական կառավարման համապատասխան տարածքային մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
4.	Սույն պլանով իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ պետական կառավարման համապատասխան տարածքային մարմին	Մինչև նոյեմբերի 15-ը	ՀՀ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ), կազմակերպություններ (համաձայնությամբ)	ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), կազմակերպություններ (համաձայնությամբ)
	Սույն պլանով իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Մինչև դեկտեմբերի 1-ը	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	ՀՀ պետական կառավարման մարմիններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)

5.	Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակչության պատսպարման ապահովման հարցերի ուսումնասիրում, շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ թաքստոցների կառուցման պլանավորում	Հոկտեմբեր	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ)
6.	«Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստարանների ցանկը հաստատելու և դրանց պահպանությունը կազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում	Դեկտեմբեր	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ (համաձայնությամբ)